




“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1883

ԹԻԻ 3



**ՏՊԵՂՈՒ ՄԵՔԵՆԱՅ**

ՏՊԵՂՈՒ ՄԵՔԵՆԱՅ

Մեքենայն, զոր կը տեսնեք վերի պատկերին մէջ, չէ այնպիսի մեքենայ որ կը գործածուի ապելու Աւետարեան և անոր նման ուրիշ լրացիւններ, այլ այս մեքենայն կը ապէ պատի թուղթ, այսինքն այնպիսի թուղթ որ կը գործածուի սենեկաց պատերը զարգարելու։ Մեր ընթերցողներէն շատեր տեսած են անտարակոյս այսպիսի թուղթ, որ կը վաճառուի զլանաձև ծալլուած։ Այս տեսակ թուղթերէն ամենք շատ զեղեցիկ են, և զարմանալի է որ այս թուղթերը կըրնան շինուիլ այնչափ զեղեցիկ և վա-

ճառուիլ այնքան աժան։ Պատճառը սա է թէ այն թուղթերը կը շինուին ոչ թէ ձեռօք այլ մեքենաներով, և մեքենայով շինուած ամէն վաճառք կը շինուին աւելի աժան քան զոր կարելի էր շինել ձեռագործ աշխատութեամբ։  
Այս յօդուածին մէջ կ'ուզենք բացատրել թէ այն թուղթերուն գոյներն ինչպէս կը տրուին, և մեր ընթերցողք զիսնալու են թէ շատ տեսակ լաթերու վրայ տեսնուած զեղեցիկ ծաղիկներն և պատկերներն ալ նոյն կերպով կը շինուին։  
Պատ զարգարելու համար գործած-

ուած թուղթն ի սկզբան սպիտակ է կամ բաց գոյն ունի։ Թէ ինչպէս կը շինուի այս թուղթն ուրիշ անգամ կը բացատրենք, հիմա կ'ուզենք ցոյցնել թէ ինչպէս կը զարգարուի զեղեցիկ գոյներով։ Պատի թուղթերէն ոմանք շատ պարզ են, ունին քիչ պատկեր կամ ծաղիկ, և ասոնք կը բաղկանան երկու կամ երեք տեսակ գոյնէ։ Այլ պարզ չեն, և ունին իբր տասներկու տեսակ գոյն։ Պատկերներն և ծաղիկներն չեն երևիր այնչափ աղէկ սպիտակ թղթի վրայ, որչափ կ'երևին գունաւոր թղթի վրայ։ Ուստի պատի թուղթը զարգարելու համար նախ թղթին կու տան

ինչ գոյն որ կ'ուզուի : Չայս ընելու համար թուղթը կ'անցունեն մեքենայի մը մէջէն : յորտ մ' կայ գլանաձև վրձին մը , և գունաւոր նիւթը պարունակող խողովակ մը գրուած է գլանաձև վրձինին տակ , և թուղթն այս գարձող վրձինին վրայէն անցնելով կ'ընդունի գոյնը , և ապա կ'անցնի շագուով տարրած գլաններու վրայէն որ շուտով կը չորցնեն զայն : Այնուհետև թուղթը պատրաստ կ'ըլլայ աւելի մեքենային համար : Ինչպէս կը տեսնուի վերի պատկերին մէջ , այս մեքենայն ունի մէկ խոշոր անիւ մը , և այն անուայն ներքև կը տեսնուին քանի մը փոքր գլաններ : Գլանայ թիւն այնչափ է որչափ գոյն տալ կ'ուզուի , քանզի իւրաքանչիւր գլան միայն մէկ գոյն կու տայ : Իւրաքանչիւր գլանի գունատու նիւթը կը գանձուի միշտ այն գլանին տակ փոքր ամանի մը մէջ : Գլանը կը շինուի միայն փայտէ , կամ փայտէ և մետաղէ միանգամայն : Գլանայ վրայ փորագրուած են ձևերն և ծաղիկներն սրովք կ'ուզուի զարդարել թուղթը : Տախտակաման վրայ փոքր ամաններու մէջ կը պահուի գունատու նիւթ լեցնելու համար գլաններու ներքև գանձուած ամաններն երբ անոնց մէջ գունատու նիւթը պակտի : Երբ բոլոր գլաններն իրենց անգերը գրուած են և փոքրիկ ամանները լեցուած այլ և այլ գունատու նիւթերով , մեքենայն պատրաստ կ'ըլլայ ապելու : Թուղթը կ'անցնի նախ մեծ անուայն և գլաններու մէջանգէն : Առաջին գլանին վրայ թերևս փորագրուած են վարդի կոկոններ , և երբ թուղթը կ'անցնի այն գլանին վրայէն , թղթին վրայ կը ապուին վարդի կոկոններ իրենց բնական գունով : Երկրորդ գլանին վրայ թերևս փորագրուած են վարդի թերթեր , և թուղթն անոր վրայէն անցնելով կ'ընդունի կոկոններու քով վարդի թերթեր իրենց բնական կանաչ գունով : Այսպէս թուղթը կ'անցնի բոլոր գլաններու վրայէն , և կ'ընդունի իւրաքանչիւրէն մէն մի ձև կամ ծաղիկ իրեն յատուկ գունով , և ապա կը տարուի տաք գլաններու վրայ չորնալու համար : Եթէ այս բոլոր ծաղիկներն և գոյները ձեռքով շինուէին , պատի թուղթի մէկ ծրարը , որ հիմա կը վաճառուի քանի մը դահեկանի , պիտի արժէր շատ լեքաներ , և հարուստները միայն կարող պիտի ըլլային զայն գործածել : Բայց մարդիկ իրենց հանձարով հնարած են մեքենաներ որ կրնան շատ աժան չի-

նել այսպիսի բաներ , և կը բազմապատուեն մեր վայելից և հանդասեան միջոցները :

ՄՐՋՆԱՌԻԹ


Մրջնառիւծը միջատ է , և բընաւ շնամանիկ անասնոց թագաւորին , այսինքն առիւծին , սակայն և այնպէս այս միջատն սովորաւ թիւններն են այնպէս հետաքրքրական որ կ'արժէ անդեկու թիւն ստանալ անոր սովորաւ թեանց վրայ : Ենթադրենք թէ ձենէ ամանք ունին մեծ սնտուկ մը կիտուին լեցուած ծովու աւազով , նաև ենթադրենք թէ ունիք այս յողուածին վերաբերեալ առաջին պատկերին մէջ ցուցուած միջատներէն երեք կամ չորս հաս : Միջատները կը դնէք սըն-



ՄՐՋՆԱՌԻԹ

մէջ : Ինչ կը նշանակէ այս : Խրամն է թակարդ մը զոր կը շինէ միջատն իւր սրբ բունելու համար : Սարգը կը հիւսէ իւր սասայնը ճանճ որսալու համար , և մրջնառիւծը խրամ կը փորէ որսալու համար մրջնաներ : Արդ , եթէ քանի մը հասարակ մրջնիւն ժողովէք և դնէք սնտուկի մէջ , պիտի տեսնէք թէ մրջնառիւծն ինչպէս կը բունէ զանոնք : Հասարակ մրջնիւնները կը սկսին վազել աւազին վրայ : Անոնց մէ մին կու գայ խրամին մտա և կ'իյնայ անոր մէջ , և ահա մրջնառիւծն իւր դարանէն կը սկսի անոր վրայ նեւել աւազ , և ժամանակ չիմոցելով մրջնիւնին փախելու կը յարձակի անոր վրայ , և անոր արիւնը կը ծծէ : Ապա կը քաշուի դարձեալ իւր բլրակին տակ , և հոն կը սպասէ ուրիշ մրջնիւնի մը դարուն :


Եթէ սնտուկին մէջ մրջնառիւծներն պահէք անոնց կերակուր տալով , քիչ ատեն ետքը պիտի տեսնէք անոնց վրայ զարմանալի փոփոխութիւն : Այլ չէք կրնար տեսնել մրջնառիւծներն իրենց առջի վիճակին մէջ : Փոխանակ



ՄՐՋՆԱՌԻԹԻ ԲՈՒԺՆԵՐ

տուկին մէջ և սնտուկին բերանը կը գոցէք ապակիով որպէս զի միջատները չփախչին , և ապակիին մէջէն դիտելով զանոնք կրնաք սորվիլ անոնց սովորաւ թիւնները : Միջատները կը պահուրաին աւազին մէջ : Արդ , եթէ շարժէք սնտուկն և աւազին մա-

չորս փոքր խրամներու և չորս բլրակներու որոյ վրայ մէկ մէկ մրջնառիւծ կը սպասէ որսի , պիտի գտնէք չորս փոքր գնտակներ նման բժոժներու կամ խիճերու : Իւրաքանչիւր մրջնառիւծ ինքզինքը կը ծածկէ աւազի հատիկներով որ իրարու կը փակչին : Մրջնառիւծն այս ծածկոյն մէջ կը մնայ ժամանակ մը ինչպէս շերամը կը մնայ բժոժին մէջ : Յետոյ առատօտ մը կը տեսնես որ գնտակներէն մէկը կտրուած է , և թեւաւոր մրջնառիւծ մը կ'ելլէ դուրս , և ինչպէս կը տեսնուի երրորդ պատկերին մէջ , կը



ՅԵՆԱՌՈՐ ՄՐՋՆԱՌԻԹ

կերկոյթն ընէք բոլորովին հարթ հաւասար , շուտ մը կը տեսնէք որ շարժում մը կայ աւազին երեսին ներքև : Իւրաքանչիւր մրջնառիւծ աւազը կը նետէ իւր ետևէն , և կը շինէ աւազին մէջ շրջանակաձև խրամ մը : Խրամը այսպէս շինուելէն ետքը մէկ տեղը կը մնայ աւազէ բլրակ մը , և մրջնառիւծը կը պահուի այն բլրակին

բզկոյ սնտուկին մէջ : Քիչ մը ետքը կը տեսնէք որ երկրորդ գնտակը կը սկսի շարժիլ , փոքր ծակ մը կ'երեկ գնտակին վրայ , և անոր մէջի անտանկին մարթը կը սկսի դուրս գալ , և ահա կ'ելլէ ուրիշ թեւաւոր մրջնառիւծ մը : Մէկ օրէն չորս մրջնառիւծներն ալ երեւան կ'ելլեն , և չորս կըստ անակները կը խորտակին և կը մնան պարպաչ

ՎԱՅՐԻ ԱՅԹԵ ԵՒ ԱՆՈՐ ՁԱԳԸ

Որտեղ մը տեսաւ վայրի այծ մը որ կծկած էր անմատչելի ժայռի մը վրայի խոռոչի մը մէջ։ Այս խոռոչին քովերը երկու սիրուն այծեր կը ցատկըսէին. մինչ անոնց հայրը չորս կողմը կը դիտէր ազահով ըլլալու համար թէ ս կ է վտանգ չէր սպառնար իւր ձագերուն։

Որտեղը ժայռն ի վեր մաղլցելով հազիւ կրնար ինքընքը վեր բռնել, բայց երբ տեսաւ այն սիրուն կենդանիները որոշեց զուշութեամբ առաջ երթալ գէպ ի նոսա։


«Որչա՛ր սիրուն են այս այծի ձագերն», բաւ որտեղն ինքնիրեն, «կ'ուզէի բռնել ամենէն փոքրը, զայն դնել մախաղիս մէջ և տանիլ որդւոցս»։

Բայց երբ ծեր այծը տեսաւ այն որտորդը, կատղեցաւ, իւր սպառնալից աչուքները անկեց որտորդին վրայ, և ջանաց զայն ժայռն ի վար գահալիժեք։ Որտորդը հեռու մղեց այծն ոտուքներովը զարնելով անոր, և մաղլցելով միշտ գէպ ի ձագերը կը յառաջանար։ Իեղծ այծը վազեց գէպ իւր ձագերը ցուցնելու անոնց թէ կրնային ազատիլ ցատկելով ժայռին ճեղքուածքին միւս կողմը, բայց ձագերէն մեծը միայն անոսց իւր հօր խորհրդին, փոքրը վարանեցաւ, և սակաց իւր եղբոր պէս ստանով անցնել միւս կողմը։ Որտորդը փոքր այծին մտա հասած էր։ Այն ասան յուսահատ այծը իւր ստունները գահաւանդին հակառակ կողման կոթնուց, և այսպէս իւր մարմնով կամուրջ մը ձեւացուց, և գլուխը դարձուց գէպ ի ձագն որ հասկցաւ թէ ինչ պարս էր ընել։ Փոքր ձագը կատարի նման ցատկեց իւր հօրը կրնակին կոթնելով և հասաւ միւս կողմը, ուր երջանիկ ընտանիքը գանուեցաւ զերծ յամենայն վտանգաց։

Հայր մը, թէև այծ մ'իսկ ըլլայ, վտանգի մէջ կը գնէ իւր անձը որպէս զի փրկէ իւր ձագերը։ Մեր փրկին ալ վտանգի մէջ դրաւ իւր անձը, և եղաւ կամուրջ փրկութեան հաստատուած երկնից և աշխարհիս մէջտեղ։ Մենք միայն անոր միջոցաւ պիտի կրնանք հասնիլ երկնիք և ըլլալ զերծ յամենայն վտանգաց։

Թարգմանեաց Է Գաղղեմիան ԵՐՈՒԱՆԻ Ե ԻՒԹԻՒՃԵԱՆ

Կ. պոլիս, Կէտիք փաշա



Գ Ո Ր Ծ

Թերեւս պիտի զարմանաք թէ ինչու համար գործի վրայ կը խօսինք ձեզ։

բայց ինչպէս յիտանք։ Գաւք միշտ տղայ պիտի չմնաք, այլ պիտի մեծնաք, ինչպէս ուրիշ մարդիկ որ ձեզի պէս տղայ էին և մեծնալով եղան չափահաս և կատարեալ մարդ։ Բայց չափահաս և կատարեալ մարդ ըլլալ հասակաւ միայն մեծնալ ըսել չէ, այլ նաև զարգանալ մտք և սրտիւ։ Այսպէս ոչ մարմնով միայն մեծնալաւ, այլ և մտք և սրտով զարգանալու համար պէտք է գործել։ Արդարև չափահաս մարդոց գործը չպահանջուի ձեռքէ, կան սակայն ձեզի համար ևս կատարելու գործեր։ Ունիք դպրոցի մէջ գործ։ Քաջ սորվեցէք ամէն օր ձեր դասերը։ Կը սխալիք, և թէ կը կարծէք թէ դպրոցին մէջ պարտաւ անցունելով ձեր ժամանակը կրնաք պատրաստ գանուիլ քննութեան օրը։ Դպրոցին նպատակներէն մին է վարժեցունել զձեզ կարգով և կանոնով ուսման և կամ գործի պարտաւ սորվիլ։ Այսպէս անուն չոգեմուն անգամ, որ արագագոյն չոգեմուն է աշխարհի, չերթար ովկիանոսի վրայ ասդին անդին, որպէս զի նաւորդք տեսնեն, մերթ՝ ահագին սառուցի լեռ մը, և մերթ՝ վիթխարի կէտ ձուկ մը։ Ոչ այսպէս, նաւագեալ կ'ուզէ նաւը միշտ իւր նպատակին, և մեքենաներն անգագաւ կը գործեն բոլոր դրութեամբ այն նպատակին համար։ Այն նաւը չէր կրնար եթէն օրուան մէջ անցնիլ Ալքանտեան ովկիանոսը եթէ նաւագեալը թափառէր ծովին վրայ, և այնպէս ի զուր ժամանակ կորսնցունէրէն ետքը աճապարէր երթալ իւր անգը։ Ուսման միջոցին կորսուած ժամանակը ետ չգառնար նորէն։

Կ'ուզեմ որ այս խրատը զոր ստի ձեզ անդանդալ պարտաւելու ձեր ուսման ի գործ գնէք նաև ուրիշ կարևոր բանի մը մէջ, այն է՝ ձեր բարաց և վարուց համար։ Աշխարհի վրայ մեր ամենուս պարտքն է ուղղել և բարւոքել մեր վարքը։ Մենք այս բանը չենք կարող ընել առանձին։ Աստուած կը ցուցնէ մեզ ճամբան և կու տայ զօրութիւն կատարելու, եթէ ինդրենք։ Բայց Աստուած բան մը չըներ մեզի համար, երբ կը տեսնէ զմեզ ծոյլ և անհոգ։ Մուրք զիւրք կը պատուիրէ մեզ ըսելով, «Ձանք ըրէք որ ձեր կոչումը և ընտրութիւնը հաստատեք» (Բ Պեա. Ա. 10)։ Աշխատելու ենք միշտ բարւոքելու մեր վարքը։ Եւ այս չկրնար ըլլալ ուրիշ կերպով, եթէ ոչ միշտ և ամէն օր ջանալով։ Բաւական չէ կարգաւ Մուրք

զիւրք և աղօթել օր մը և յաջորդօրը թողուլ։ Ինչպէս որ պէտք ունինք մարմնաւոր կերակրոյ ամէն օր, նոյնպէս պէտք ունինք ամէն օր հոգեւորին։ Բարի ծառայ չէ Բրիտանոսի այն որ կը ծառայէ անոր երբեմն միայն և ըստ հաճոյս իւր։ Անդադար ջանքն է որ գործ կը կատարէ, նոյնպէս անդադար ջանքն է որ կ'ուզէ բարքը և կ'ազնուացունէ վարքը։ Զմեզ երկնից յարմար ընելու գործը մեծ և հանապազօրեայ փութոյ գործ է, և չըլլար առանց հաւատոյ, աշխատութեան և աղօթքի։

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Մօտերս Ամերիկայի հասարակ դրուրոցներէն միայն մէջ շատ հաճելի գէպք մը տեղի ունեցաւ։ Այս դպրոցի աշակերտք, որոց մեծագոյն մասն եթէ կամ ութ տարեկան տղայք էին, զընդակ խաղալու ասան դրացիներէն մեկուն պատահանին ապակին կտորած էին։ Նոյն օրը կարելի չեղաւ գանել թէ ով էր ապակին կտորողը, վասն զի կտորողը չէր խոստովաներ, և անոր ընկերները չէին ուզեր յայտնել յանցաւորը։

Վարժուհին հոգ կ'ընէր որ կարող չեղաւ յանցաւորը գանել։ Հետեւեալ օրը դպրոց այցելութեան եկաւ վարժուհոյն ծանօթներէն մարդ մը, որ գիտէր թէ ինչպէս պէտք է խօսիլ փոքր տղայ։ Վարժուհին այն մարդուն պատմեց թէ ինչպէս տղայք կտորած էին դրացոյն ապակին, և թէ ինք կարող եղած չէր գանել յանցաւոր տղայն, և ինդրեց այն մարդէն որ խրատ խօսի աշակերտաց և հասկցունէ անոնց թէ սխալ էր իրենց յանցանքը չխոստովանիլ։

Այցելուն խօսեցաւ տղայոց թէ ինչպէս պարտին վարուիլ փողոցներու մէջ և խաղի ասան։ Պարզ խօսքերով հասկցուց անոնց թէ պարտին ամէն անգ ուղղութիւն, ճամբատարութիւն և բարութիւն ցուցնել, մինչև իսկ երբ միակ են, և բաց Աստուծմէ չկայ այլ ոք որ կը տեսնէ անոնց գործերը։ Աշակերտք կը թուի թէ զգածուեցան այն մարդուն խրատներէն և դիտարութիւններէն։ Մարդը դպրոցէն դուրս ելլելէն ետքը փոքրիկ տղայ մը ստք ելաւ, և այսպէս բաւ։ «Օրիորդ Շույան (այս էր վարժուհոյն անունը), ես նետեցի այն գնդակն որ կտորեց ճիկին Մարիամի պատու հանին ապակին։ Պատրաստ եմ ապակոյն գինը տալ» Երբ այս տղայն սկսաւ խօսիլ, խոր

լուծիւն մը տիրեց դպրոցը սրահին մէջ, և ապա ուրիշ աղայ մը սաք ելլելով ըսաւ. «Արդարաւթիւն չէ որ կարապետ միայն հասուցանէ կտորած ապակոյն ամբողջ դինը: Մենք աւելնքս ի միասին կը խողայինք, որդար է որ մենէ իւրաքանչիւրը հասուցանէ իւր բաժինը: Ես կը հասուցանեմ իմ բաժինս:» Ուրիշ աղայ մը սաք ելաւ և ըսաւ. «Ես ալ կը հասուցանեմ իմ բաժինս:» և ուրիշ մը ըսաւ նոյնպէս:

Բոլոր դպրոցը կարծես թէ բերկրութեամբ լցաւ երբ այս աղայք ելան ուղղութեամբ և պարզութեամբ խոստովանեցան ինչ որ օր մը յառաջ կը ջանային ծածուկ պահել: Հետեւեալ օրը աղայք բերին ստակն, և այս գէպքն անմուսնալի դաս մ'եղաւ թէ վարժուհւոյն և թէ աշակերտաց համար:

ԲԱՋԷ

Բազէ անունը կը տրուի այս որսի թռչունին որ կը գանուի գրեթէ ամէն երկիր, և ունի շատ տեսակներ: Այն բազէն որ կը տեսնուի վերի պատկերին մէջ, կը կոչուի «Թափառական բազէ»: Այս թռչունն է զօրաւոր, կը թռչի շատ արագ և շատ բարձր, և բարձրէն շիտակ կը նետուի իւր որսին վրայ: Արու բազէն է իբր կէս կանգուն երկայն, և անոր թեւերուն տարածութիւնն է իբր մէկ կանգուն, իսկ էգ բազէն է իբր մէկ չորրորդաւելի մեծ քան զարուն:

Այս թռչունը իրենց բոյները կը շինեն ընդհանրապէս ծառի ճիւղերէ բարձր ժայռերու վրայ: Ասոնք միայնակ կ'ապրին, և բաց ի ձագ հանելու եղանակէն ուրիշ ասան քիչ անգամ երկուքը մէկտեղ կը դառնան: Բազէները կ'որսան բաժ, աղանի և ձուկ: Բազէն երբ կը մտնենայ իւր որսին, ոտուըններով և ճանկերով կը զարնէ անոր, և եթէ որսը թեթեւ է, զայն առնելով կը թռչի կ'երթայ. իսկ եթէ որսը ծանր է, զայն կը սպաննէ և յարմարագոյն տեղ մը տանելով կ'ուտէ:

Վառօթի դիտէն առաջ մարդիկ թռչուն որսալ տարաւ համար բազէ կը պահէին և կ'ընտանեցունէին զանոնք: Բազէներն ընտանեցունելու համար հարկ է զանոնք բռնել մինչ ձագ են բոյնի մէջ, և մէկէն սկսիլ կրթել զանոնք: Լաւ ընտանեցած և կրթուած բազէն կը նստի իւր տիրոջ ձեռքին վրայ:



ԲԱՋԷ

րայ, և երբ անոր ցուցուի որսի թռչուն մը, կը թռչի և մեծ արագութեամբ կ'երթայ այն թռչունին ետեւէն, և զայն բռնելով կը բերէ տիրոջը: Այս թռչունը երկար կ'ապրի: Գաղիոյ Հենրիկոս Գ. թագաւորն ունէր բազէ մը որ Բարիզէն թռչելով մինչև Մալթա, այսինքն 1,000 մղսն սեղ գնաց մէկ օրուան մէջ:

ԼՈՒՍԻՆՆ ԵՒ ՕՒՐ

Այլեւայլ երկիրներու մէջ կան շատ մարդիկ որ կը կարծեն թէ օգը կը փոխուի, այսինքն կը բացօրի կամ կ'աւրուի երբ լուսինը կը փոխուի: Եթէ այսպէս ըլլար, այս իրողութիւնը գիւրաւ կընար ապացուցուիլ աստեղագիտաց գննութիւններով: Սակայն ընդհակառակն, շատ աստեղագէտք, ինչպէս Հերշել և այլք, երկար տարիներու աստեղագիտական գննութեանց արդիւնքը քննելէ ետքը յայտարարած են թէ պատճառ չկայ կարծելու որ երբ լուսինն է եօթնօրեայ, չորեքասանօրեայ, քսանեմօրեայ կամ քսան հուրօրեայ, օգի աւելի փոփոխութիւն տեսի կ'ունենայ քան ուրիշ օրերիցէ ժամանակ: Եթէ խորհինք որ լուսնոյ երեկոթը միշտ կը փոխուի մէկ նոր լուսնէ մինչև միւս նոր լուսն գրեթէ ամէն օր, կրնանք հետեցնել թէ լուսնոյ այս ինչ օրերու մէջ օգի վրայ մասնաւոր ազդեցութիւն մ'ունենալուն դադարաբար մնացող մ'է հին նախապաշարման թէ երկնային մարմինք ունին հզօր ազդեցութիւն մարդկային գործոց վրայ: Մեր մանկահասակ ընթերցողք ըզգոյշ ըլլալու են ընդունիլ այնպիսի գաղափարներ որ բնաւ հաստատութիւն չեն գտներ դիտութենէ:

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆՔ  
 ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն գրուած, և Հոյ. Տարգմանք), փոսթայի ծախքով, տարին 6 դահեկան է:

Սեփական Մեծնորայ ընկերութեամբ  
 Ֆիլադելֆիա Երկրաշուք, ԱՄՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՐ  
 ՏՊԱԳՐԱԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՒՐ